ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Գեղարունիքի մարզի Գեղամավանի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ՝ համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի առաջատար մասնագետի (ծածկագիր՝3.1-2) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

Առաջատար մասնագետը՝

ա) ապահովում է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի , շենքերի, վարձավճարների հավաքագրում և այս հարցում կատարում է իր անմիջական ղեկավարի հանձնարարականները: Պատասխանատվություն է կրում հողի վարձավճարների մասով բյուջեի սեփական եկամուտների չկատարման համար.

բ) կատարում է ՏԻՄ-ում և աշխատակազմում մուտքագրված հարկերի, տուրքերի, վարձավճարների ինֆորմացիոն բազայի և մյուս գործառնությունների հետ կապված այլ տեղեկատվությունների համակարգչային զետեղման աշխատանքներ, կատարում է այդ հարցերում իր անմիջական ղեկավարի բոլոր հանձնարարությունները.

գ) մասնակցում է համայնքի բնակիչներին պատկանող անասնագլխաքանակի , թռչունների և այլ գույքի հաշվառման աշխատանքներին.

դ) իր իրավասությունների շրջանակներում իրականացնում է Աշխատակազմի առջև դրված գործառույթներից բխող առաջարկությունների, եզրակացությունների, պատասխանների , հաշվետվությունների տպագրման աշխատանքները,

ե) կատարում է իր կողմից սպասարկվող բնագավառի ուսումնասիրությունները և արդյունքները ներկայացնում իր ղեկավարին.

զ) իր լիազորությունների շրջանակներում կատարում է փաստաթղթային սպասարկումը, ապահովում է աշխատակազմ մուտքագրված, իրեն վերաբերյալ փաստաթղթաշրջանառության իրականացման աշխատանքները.

է) իր անմիջական ղեկավարի հանձնարարությամբ իրականացնում է աշխատակազմի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող առաջարկությունների և այլ փաստաթղթերի արխիվացման ու պահպանության աշխատանքները.

ը) իր լիազորությունների շրջանակներում, ինչպես նաև անմիջական ղեկավարի հանձնարարությամբ նախապատրաստում է տեղեկանքներ, առաջարկություններ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլն.

թ) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ կարող է մասնակցել աշխատակազմի ծրագրերի մշակման աշխատանքներին.

ժա) մասնակցում է համայնքի զինապարտների գրանցամատյանի օրենքով սահմանված կարգով վարման աշխատանքներին, նախապատրաստում և աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում առաջարկություն զինապարտների վերաբերյալ ցուցակները, ինճպես նաև ըստ բնակության վայրի հաշվառումից հանվելու, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու վերաբերյալ տվյալները տարածքային զինվորական կոմիսարիատ ներկայացնելու համար.

ժբ) իր իրավասության սահմաններում մասնակցում է զորակոչի, զորահավաքի ու վարժական հավաքների կազմակերպման աշխատանքներին.

ժգ) իրենց պարտականությունները խախտած զինապարտ քաղաքացիների վերաբերյալ տեղեկություններ ունենալու դեպքում այդ մասին անհապաղ տեղեկացնում է աշխատակազմի քարտուղարին.

ժդ) իր իրավասության սահմաններում մասնակցում է նախազորակոչային, զորակոչային տարիքի անձանց և պահեստազորայինների զինվորական հաշվառման բնագավառում ՀՀ օրենսդրությամբ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց վերապահված լիազորությունների իրականացման աշխատանքներին.

ի) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Առաջատար մասնագետն ունի օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ (սոցիալական երաշխիքներ) և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականութուններ (սահմանափակումներ):

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

1)<<Համայնքային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

-տիրապետում է անհրաժեշտտեղեկատվությանը

2) Տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը,

3) Համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն

Մրցույթին մասնակցելու համար քաղաքացիներն աշխատակազմ են ներկայացնում՝

ա) գրավոր դիմում (տրվում է հանձնաժողովի անունով՝ նշելով այն պաշտոնը, որին հավակնում է դիմողը).

բ) համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնն զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները.

գ) հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մարտի 3-ի N 310-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով, որը համայնքային ծառայության պաշտոնում նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանն ու լիազորությունների իրականացմանը.

դ) հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

ե) հայտարարություն համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով պահանջվող օտար լեզվին (լեզուներին) տիրապետելու մասին.

զ) օրենքի 12 հոդվածի «ե» կետի պահանջը բավարարելու նպատակով արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք.

է) մեկ լուսանկար՝ 3 X 4 սմ չափսի.
ը) անձնագրի պատճենը:

Քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ, ներկայացնելով անձնագիր:

Փաստաթղթերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ ժամը 10-ից մինչև 17-ը Գեղամավանի համայնքապետարանում՝ 2019 թվականի հուլիսի 3-ից մինչև հուլիսի 18-ը ներառյալ:

Մրցույթը կայանալու է 2019 թվականի օգոստոսի 5-ին ՝ ժամը 12:00-ին Գեղամավանի համայնքապետարանում: Տեղեկությունների համար դիմել Գեղամավանի համայնքապետարանի աշխատակազմ (հասցե՝ գ. Գեղամավան, 1 փող., 1 նրբ., շ.8, հեռախոս՝ 093235464):

ԳԵՂԱՄԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ